600.0137.15.04.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ապրիլի 2020 թվականի №137Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի №250Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 13-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ, 34-րդ հոդվածները և հաշվի առնելով «ՋԻԹԵԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020 թվականի ապրիլի 3-ի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 19-ի «ԳՐԻԱՐ ՏԵԼԵԿՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանրային ամրակցված հեռախոսային ցանցի միջազգային ազդակների հանգույցի կոդի, ոչ աշխարհագրական կոդերի և համարների զբաղեցման թույլտվություն տրամադրելու մասին» №250Ա որոշմամբ «ԳՐԻԱՐ ՏԵԼԵԿՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված և 2018 թվականի դեկտեմբերի 14-ի «ԳՐԻԱՐ ՏԵԼԵԿՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման լիցենզիան և հանրային ամրակցված հեռախոսային ցանցի միջազգային ազդակների հանգույցի կոդի, ոչ աշխարհագրական կոդերի և համարների զբաղեցման թույլտվությունը վերաձևակերպելու մասին» №718Ա որոշմամբ «ՋԻԹԵԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անվամբ վերաձևակերպված հանրային ամրակցված հեռախոսային ցանցի միջազգային ազդակների հանգույցի

կոդի, ոչ աշխարհագրական կոդերի և համարների զբաղեցման թույլտվության գործողության ժամկետը՝ որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածը շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի ապրիլի 21-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք.Երևան
15 ապրիլի 2020թ.